



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌԻԻ ՄԱՐԶՊԵՏ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎/0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ \_\_\_\_\_

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2022թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» նախագահ  
Շուշան Դոյրոյանին

Ձեր 29.12.2021թ. հարցմանը

Հարգելի տիկին Դոյրոյան, տեղեկացնում ենք, որ՝

1. Լոռու մարզպետարանը վարում է հարցումների առանձին վիճակագրություն:
2. Հարցումների վիճակագրությունը վարելու պարտականությունը դրված է Լոռու մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Աննա Գասպարյանի վրա, ով միաժամանակ հանդիսանում է տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձ:
3. Գրավոր հարցումներն ստացվում են էլեկտրոնային փոստով, փոստով կամ առձեռն և <https://e-request.am/hy> համակարգի միջոցով: Դրանք ստանալուն պես մարզպետարանի քարտուղարության վարչությունը Mulberry համակարգով հարցումների մասին տեղեկացնում է Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետին: Վերջինս էլ իրականացնում է վիճակագրությունը:
4. Վիճակագրությունն իրականացվում է թե՛ հատուկ այդ նպատակով առանձնացված գրանցամատյանում, թե՛ տեղադրվում է Լոռու մարզպետարանի էլեկտրոնային կայքէջում՝ <http://lori.mtad.am/vijakagrutyun/> հղումով :
5. Մարզպետարանի տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձ է հանդիսանում Լոռու մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Աննա Գասպարյանը:
6. ՀՀ Լոռու մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Աննա Գասպարյանը տեղեկատվության ազատության ապահովման

պատասխանատու անձ է նշանակվել ՀՀ Լոռու մարզպետի 18 սեպտեմբերի 2019թ., թիվ 545-Ա որոշմամբ:

7. Որոշումը կարող եք տեսնել հետևյալ հղումով՝ <http://lori.mtad.am/files/legislation/42109.pdf> :

8. Աննա Գասպարյանը՝ սկսած 2016թ.-ից, պարբերաբար մասնակցել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից կազմակերպված դասընթացներին(այդ թվում նաև՝ առցանց):

1/4/2022

X 

ԱՐԱՄ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Հարգանքով՝

Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ